ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

3 ապրիլի չորեքշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

46
(2896)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԴԵԿԱՆԻ ԹԵԿՆԱԾՈՒ ՈՒՆԻ. ԹԵԺ ՊԱՅՔԱՐ

Այսօր՝ ապրիլի 3-ին, կայանալու են Երեւանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի դեկանի ընտրությունները:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ Գիտխորհրդի նիստը, որը կկայանա ժամը 12:00-ին, շատ թեժ է անցնելու:

Բանն այն է, որ Իրավագիտության ֆակուլտետի դեկան Գագիկ Ղազինյանը, որը դեկանի պաշտոնում է 1996 թվականից, այս տարի դեկանի ընտրություններում չի առաջադրվել. վերջինս հրաժարվել է եւ նշել, որ տեղը զիջելու է իրենից ոչ պակաս ֆակուլտետի հնաբնակ Հարություն Խաչիկյանին:

Հարություն Խաչիկյանը հանդիսանում է Իրավագիտության ֆակուլտետի դեկանի տեղակալ 1994 թվականից, իսկ 2012 թվականից մինչ օրս ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի պրոֆեսոր է:

Խաչիկյանի հետ ինքնաառաջադրվել է նաեւ ՀՀ ԱԺ ԲՀԿ նախկին պատգամավոր, իրավաբան Գեւորգ Պետրոսյանը:

Ըստ «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների՝ Գիտխորհրդում Պետրոսյանը չունի վստահություն, սակայն Խաչիկյանին գիտեն եւ վստահում են գրեթե բոլորը:

Հավելենք նաեւ, որ սա այն եզակի ֆակուլտետներից է, որտեղ դեկանը իշխանության «սրտի» մարդը չէ եւ տարիներ շարունակ պայքարել է, որ քաղաքականությունը չմտնի ֆակուլտետի պատերից ներս: Ավելին՝ ԵՊՀ-ում գրեթե բոլոր ֆակուլտետները աշխատում են իշխանության ենթակայության տակ եւ անմիջական հրահանգներով:

Այժմ Ղազինյանի (որը ընդդիմադիր թեւի կողմնակից էր) չառաջադրվելը իշխանության «սրտի» քայլ էր, եւ նրանք հնարավորությունը բաց չեն թողնի այստեղ եւս արմատավորել իշխանական թեզերը:

Ավագանու ընդդիմադիր անդամները պահանջում են Երեւանի քաղաքապետարանի կանաչապատման ՀՈԱԿ-ի ղեկավար Արմեն Բեգոյանի հրաժարականը: Հիշեցնենք, որ դեռ օրեր առաջ՝ մարտի 24-ին, Երեւանի կենտրոնում միջադեպ էր տեղի ունեցել ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամների եւ կանաչապատման ՀՈԱԿ-ի ղեկավար Արմեն Բեգոյանի եւ մյուս աշխատակիցների միջեւ: «Ազգային առաջընթաց» խմբակցության երկու անդամներ՝ Հայկ Գրիգորյանը եւ Ռոբերտ Ծովյանը, Երեւանի Թումանյան փողոցում նկատել էին, որ հերթական ծառահատումն է իրականացվում, մոտեցել էին՝ պարզաբանում պահանջելու, սակայն, ինչպես ավագանու անդամներն էին մեզ հետ զրույցում պատմել, կանաչապատման ՀՈԱԿ-ի աշխատակիցները հարձակվել էին իրենց վրա ու հարվածել, իսկ ՀՈԱԿ-ի տնօրեն Արմեն Բեգոյանը հայհոյել էր նրանց: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ ավագանու ընդդիմադիր անդամներն օրերս պաշտոնապես դիմում են ներկայացրել քաղաքապետ Տիգրան Ավինյանին՝ պահանջելով Արմեն Բեգոյանի պաշտոնանկությունը: «Դիմումը երկու օր առաջ ենք ներկայացրել Տիգրան Ավինյանին: Պահանջում ենք կասեցնել Արմեն Բեգոյանի գործունեությունը եւ ծառայողական քննություն նշանակել միջադեպի մասով»,- «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ասաց ավագանու անդամ Հայկ Գրիգորյանը:

Գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության եւ սպորտի հարցերի ԱԺ մշտական հանձնաժողովի նախագահ Սիսակ Գաբրիելյանի եւ ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Աշոտ Սիմոնյանի քրեական գործը դատարանում կանգ է առել: 2024 թվականի ընթացքում քրեական գործով որեւէ նիստ չի կայանում դատարանում: Հիշեցնենք, որ «Հայաստան» խմբակցության պատգամավոր, Արագածոտնի նախկին մարզպետ Աշոտ Սիմոնյանին մեղադրանք է առաջադրվել, որ նա, մասնակցելով 2020 թվականի դեկտեմբերի 28-ին՝ ժամը 09:00-ից մինչեւ 11:30-ն ընկած ժամանակահատվածում Երեւան քաղաքի Դեմիրճյան փողոցում՝ Ազգային ժողովի մոտ անցկացվող հավաքին, խոչընդոտել է աշխատանքի վայր ժամանող Սիսակ Գաբրիելյանի երթեւեկը, հնչեցրել անպարկեշտ արտահայտություններ: Իրականում մի խումբ քաղաքացիներ վիրավորել էին Սիսակ Գաբրիելյանին, նա էլ քաղաքացիներին էր վիրավորել, հայհոյել, մյուս կողմը ձու էր նետել պատգամավոր Գաբրիելյանի ուղղությամբ: Եւ, ահա, այս գործը չի քննվում դատարանում ըստ պատշաճի, սակայն ԲԴԽ նախագահ Կարեն Անդրեասյանը չի անհանգստանում այս գործի ողջամիտ ժամկետների խախտման համար:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նախկին նախագահ Հայկուհի Հարությունյանի ճնշման քրեական վարույթով հակակոռուպցիոն կոմիտե է հրավիրվել եւ հարցաքննվել ՔՊ խմբակցության պատգամավոր Էդուարդ Աղաջանյանը: Ավելին՝ քրեական վարույթի շրջանակներում հարցաքննվել է նաեւ ԱԱԾ նախկին տնօրեն Միքայել Համբարձումյանը: «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ հարցաքննվել է նաեւ Հայկուհի Հարությունյանը: Բացի այդ, ԱԱԾ նախկին տնօրենն ու Հայկուհի Հարությունյանը եւս առերեսվել են կոմիտեում: Ինչպես հայտնի է, դեկտեմբերի 6-ին Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նախկին նախագահ Հայկուհի Հարությունյանի կողմից Ազգային ժողովում հնչեցրած հայտարարության առթիվ քրեական վարույթ է նախաձեռնվել: Խոսքը, մասնավորապես, իր պաշտոնավարման ընթացքում եւ, դրանով պայմանավորված, իր նկատմամբ ճնշման մի դեպքի մասին էր: Պատասխանելով «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Հայկ Կոնջորյանի հարցին՝ Հարությունյանը նշել էր, որ ԱԱԾ-ից եղել է զանգ կոնկրետ սուբյեկտի վերաբերյալ կայացված բարեվարքության եզրակացության առնչությամբ: «Ներողություն եմ խնդրում, բայց Ձեր պահանջին հետեւելով՝ հրապարակում եմ՝ Ազգային անվտանգության ծառայությունից.. որ բացասական եզրակացություն այն թեկնածուի մասով, որ ԱԺ-ում պիտի քվեարկվեր...Արժանացել է բացասական եզրակացության, եւ դա անհանդուրժելի է նաեւ... Ներկայացվել է որպես ազգային անվտանգության խնդիր, քանի որ այդ թեկնածուի ընտրվելը պիտի ապահովվեր: Վերջին բառակապակցությունը գուցե շատ սուր հնչի: Ես անմիջապես՝ հենց այդ պահին, զանգի մասին տեղեկացրել եմ եւ փորձել եմ ճշգրտում անել՝ առհասարակ դա՝ որպես երեւույթ, ինչ-որ մեկը կառավարությունում տեղյակ է, թե ոչ, եւ պիտի շնորհակալություն հայտնեմ, որ անմիջապես արձագանքը եղել է...Հաջորդ օրը նույնիսկ պարոն Աղաջանյանը (նկատի ունի պատգամավոր Էդուարդ Աղաջանյանին՝ հեղ.) այցելել էր նույն շենքում տեղակայված մեկ այլ կառույցի՝ Բնապահպանական տեսչական մարմին, եւ նաեւ այցելեց հանձնաժողով, եւ 4 անդամով (այդ ժամանակ 4 անդամ էինք), ես անձամբ բոլորի ներկայությամբ դեպքը պարոն Աղաջանյանին ներկայացրել եմ:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

ԶՐՈՒՅՑ

«ԴԱ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՈՒՐԱՑԿԱՆԻ ՎԱՐՔԱԳԻԾ Է»

Ամ «Հայաստան» խմբակցության դատգամավոր Լիլիթ Գալստյանն ArmLur.am-ի հետ զրույցում խոսել է բանակցային գործընթացի եւ խորհրդարանական ընդդիմության անելիքների մասին:

-Տիկին Գալստյան, Պաշտպանության նախարարությունը կրկին հայտարարություն տարածեց, որ հակառակորդը թե՛ ապրիլի 1-ին, թե՛ ապրիլի 2-ին սադրանքի է դիմել Գեղարքունիքի, Սյունիքի գյուղերի ուղղությամբ, եւ տեսնում ենք, որ իշխանությունը շարունակում է ամենօրյա սադրանքների ֆոնին խոսել խաղաղության մասին: Դուք՝ որպես ընդդիմադիր պատգամավոր, ինչպե՞ս եք այս պայմաններում պատկերացնում Ադրբեջանի հետ խաղաղությունը:

-Ես չեմ պատկերացնում, դա անհնարինության շարքից է: Շատ վաղուց՝դեռ մեկերկու տարի առաջ, խաղաղության գործընթացը ինձ համար ունի մեկ գնահատական՝ խաղաղության մուրացկանության: Խաղաղության մուրացկանություն, որովհետեւ պատճառների մասին շատ ենք խոսել. պարտվածի բանակցությունները այսպիսին կլինեն՝ստորացված, միակողմանի զիջումներով՝ երկրի ամբողջականության հաշվին: Այսօր քանի որ թուլացած, տկար, պետական իմունիտետը կորցրած Հայաստանն է, Ադրբեջանը ծավալապաշտական եւ ագրեսիվ քաղաքականությամբ պոկում է այն ամենը, ինչ հնարավոր է, իսկ դա ունի մեկ գին՝նրանց աթոռի գինը, Հայաստանի պետականության կորստի գինը:

-Տիկին Գալստյան, նաեւ տեսնում ենք, որ ընդդիմադիր պատգամավորները այս օրերին գնում են մարզեր՝ բնակիչների հետ հանդիպման: Ի՞նչ արդյունքներ կան, ի՞նչ տրամադրվածություն է մարդկանց մոտ:

-Գիտեք, ոչ միայն այսօր, վաղուց մեր խմբակցության եւ «Դաշնակցության» գործելաոճի մեջ են եղել մարզային հանդիպումները, իսկ այսօր մենք ուղղակի պատերազմի սպառնալիքի մեջ ենք ապրում, պատերազմը կախված է մեր գլխին, եւ մեզ պատերազմով սպառնում է ոչ միայն Ադրբեջանը, այլեւ մեր երկրի ղեկավարը ՝դեղին երկաթե կտորը ձեռքին ծածանելով, եւ փորձում է համոզել, որ պիտի տանք, որ խաղաղ ապրենք. դա, ասացի, որ քաղաքական մուրացկանի վարքագիծ է: Մենք մարզեր գնում ենք նախեւառաջ մեր ժողովրդի կողքին լինելու, մեր ժողովրդի հետ մեր երկխոսությունը շարունակելու, տրամադրություններին ծանոթ լինելու: Ստացվում է մեզ մոտ, բայց դա բավարար չէ, որովհետեւ այսօր մենք ունենք մեկ օրակարգ. դա Հայաստանի պետականության կորուստը, կոլապսը կասեցնելն է, եւ մենք կարծում ենք, որ դա հնարավոր է միայն համազգային օրակարգերի շուրջ համախմբումով:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՔՆՆԱՐԿԵԼ ԵՆ

ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆ ԲԱՐԵՓՈԽԵԼՈՒ

Նախագծով առաջարկվում է Հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողովի նախագահի եւ հանձնաժողովի անդամի հիմնական աշխատավարձի հաշվարկման գործակիցները սահմանել Կենտրոնական ընտրական հանձնաժողովում համադասախան դաշտոն զբաղեցնող անձանց հիմնական աշխատավարձի հաշվարկման համար սահմանված գործակիցների չափերին համադասախան: Ներկայացնելով ««Պետական դաշտոններ եւ դետական ծառայության դաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծն առաջին ընթերցմամբ՝ ասել է ՀՀ վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի ղեկավար Վաչե Քալաշյանը:

Հարցը քննարկվել է Պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի ապրիլի 2-ի նիստում:

«Ելնելով «Վարձատրության մասին» օրենքով սահմանված սկզբունքներից՝ այն է, որ վարձատրության քաղաքականությունը պետք է լինի խարսխված արդարության, համադրելի գործակիցների եւ պատասխանատվության ու պարտականություններին համաչափ, Կառավարությունն առաջարկում է Հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողովի նախագահի եւ անդամի գործակիցները նույնպես վերանայել եւ համամասնորեն բարձրացնել»,- նշել է Վաչե Քալաշյանը:

Հիմնական զեկուցողը պատասխանել է պատգամավորների հարցերին՝ անդրադառնալով Հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողովի նախագահի եւ անդամի պարտականություններին ու լիազորություններին, Անկախ պետական մարմինների վարձատրության գործակիցներին, վարձատրության քաղաքականության միասնականությանը:

Պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Վլադիմիր Վարդանյանը հետաքրքրվել է՝ինչպիսին է Անկախ մարմինների վարձատրության սկզբունքը, որ կոլեգիալ մարմինն է ամենաբարձրը վարձատրվում, եւ արդյոք կան վարձատրության անհամապատասխանություններ գործող մարմիններում: «Մենք ունենք 6 անկախ պետական մարմին, որոնցից վարձատրության ամենաբարձր գործակիցը ԲԴԽ նախագահինն ու անդամինն է»,- պատասխանել է Վաչե Քալաշյանը:

«Պետք է հարգվի Սահմանադրական կարգավիճակը, ինչից ելնելով էլ՝ պետք է կատարվի ներկայացված փոփոխությունը»,- նշել է Վլադիմիր Վարդանյանը՝ հավելելով, որ Անկախ մարմինների գործառույթների մեջ չպետք է լինի հսկայական անջրպետ:

Եզրափակիչ ելույթում հիմնական զեկուցողը նշել է, որ հետագա մասնագիտական քննարկումներում վարձատրության բարեփոխումների շրջանակում անհրաժեշտ է անդրադառնալ վիճահարույց խզվածքներին եւ հաղթահարել որոշակի աղավաղումները: «Կառավարության կողմից հաստատված բարեփոխումների ռազմավարությամբ դա նույնպես նախատեսված է, եւ մինչեւ 2026 թվականը մենք հանձնառություն ունենք իրականացնելու այդ բարեփոխումը»,- ասել է Վաչե Քալաշյանը:

Նախագիծը ստացել է դրական եզրակացություն:

ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆ Է ՀԱՅՏՆԵԼ

Ադրբեջանի պաշտպանության նախարար Զաքիր Հասանովը պաշտոնական այցով Ադրբեջանում հանդիպել է Թուրքիայի նախագահի աշխատակազմի պաշտպանական արդյունաբերության կոմիտեի նախագահ Հալուք Գյորգյունի գլխավորած պատվիրակությանը:

Ինչպես հաղորդում է ԱՊԱ-ն՝Ադրբեջանի պաշտպանության նախարարությանը հղումով, Հասանովը վստահություն է հայտնել, որ Ադրբեջանի եւ Թուրքիայի միջեւ իրականացվող համատեղ արտադրական նախագծերն էլ ավելի կբարձրացնեն «երկու եղբայրական երկրների» բանակների պաշտպանունակությունը:

Իր հերթին Հ. Գյորգյունը հատկապես ընդգծել է, որ «Ադրբեջանի եւ Թուրքիայի նախագահների անկեղծ հարաբերությունները բարենպաստ ազդեցություն են ունենում ռազմական համագործակցության, ինչպես նաեւ այլ ոլորտների վրա»:

Թուրքիայի առաջատար ռազմարդյունաբերական ընկերությունների ղեկավարների մասնակցությամբ հանդիպմանը քննարկվել են երկկողմ ռազմականեւ ռազմատեխնիկական համագործակցության զարգացման հեռանկարները, մտքերի հանգամանալից փոխանակում է տեղի ունեցել փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող մի շարք հարցերի շուրջ. հայտնում է լրատվամիջոցը:

ԱՅԼԱՏՅԱՑՈՒԹՅԱՆ ՍԵՐՄԱՆՈՒՄ

«Crocus City Hall-ի ահաբեկչության հեղինակները ցանկացել են այլատյացության եւ իսլամոֆոբիայի ալիք հրահրել Ռուսաստանում»,- ՆԳՆ կոլեգիայի ընդլայնված նիստում հայտարարել է Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինը:

ՌԴ նախագահը երկրի ներսում պառակտումներն ու խուճապը կանխելու կոչ է արել: «Ուզում եմ ընդգծել, որ անընդունելի է վերջին ողբերգական իրադարձություններն օգտագործելը ազգային անմիաբանություն, այլատյացություն, իսլամատյացություն հրահրելու համար:

Իրականում ահաբեկիչների եւ նրանց պատվիրատուների գլխավոր նպատակը դա էր՝ նախեւառաջ մեր երկրում խռովություն եւ խուճապ, բախումներ եւ ատելություն սերմանելը, Ռուսաստանը ներսից պառակտելը»,- ասել է Ռուսաստանի Դաշնության նախագահը:

Պուտինը միաժամանակ շեշտել է ծայրահեղականության ցանկացած դրսեւորման դեմ պայքարելու անհրաժեշտության մասին, որի տարածման վրա, ի թիվս այլ երեւույթների, ազդում է անօրինական ներգաղթը:

Ըստ Ռուսաստանի Դաշնության նախագահի՝ նմանատիպ պայմաններում տեղի է ունենում «տարբեր տեսակի կեղծ քարոզիչների գաղափարական առաջմղում»:

ԶԳՈՒՇԱՑՆՈՒՄ Է

Միացյալ Նահանգները զգուշացնում է եւ շարունակելու է զգուշացնել, որ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հռետորաբանության սրում կամ հայ-ադրբեջանական սահմանի երկայնքով ռազմական գործողություններ չլինեն: Լրագրողների հետ ճեպազրույցի ընթացքում այս մասին նշել է ԱՄՆ պետքարտուղարության խոսնակ Մեթյու Միլլերը:

«Մենք շաբաթվա վերջում տեսանք Ադրբեջանի կառավարության հայտարարությունը: Նշեմ, որ ԵՄ դիտորդական առաքելությունը երեկ հայտարարեց, որ չնայած այդ հայտարարություններին՝ հայ-ադրբեջանական սահմանին հանդարտ եւ հանգիստ է եղել, զորքերի եւ հրետանու արտասովոր տեղաշարժեր չկան»,- հիշեցրել է Միլլերն՝ ի պատասխան ադրբեջանական կողմի հայտարարություններին, թե հայկական զինված ուժերն իբր տեղաշարժեր են իրականացնում եւ զինտեխնիկա են կուտակում սահմանին:

Մեթյու Միլլերը հավելել է, որ ԱՄՆ-ն շարունակում է խրախուսել տարածաշրջանում արդար եւ արժանապատիվ խաղաղության պայմանների ստեղծումը, որտեղ հարգվում են բոլորի իրավունքները:

«Եվ ինչպես դուք բազմիցս լսել եք ինձ այս ամբիոնից, կայուն խաղաղություն ապահովելու միակ ճանապարհը բանակցությունների սեղանն է»,- եզրափակել է խոսնակը՝ ընդգծելով, որ իրավիճակի սրումը չի բխում ո՛չ Հայաստանի, ո՛չ էլ Ադրբեջանի շահերից:

Վերջին օրերին Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը տեղեկատվություն է տարածում, թե հայկական զինված ուժերն Ադրբեջանի հետ սահմանին տեղաշարժեր են իրականացնում: Ադրբեջանի պաշտպանության նախարարության այդ հայտարարությունները հերքել է Հայաստանի պաշտպանության նախարարությունը:

Հայաստանում Եվրոպական Միության դիտորդական առաքելությունը եւս հերքել է Ադրբեջանի պաշտպանության նախարարության տարածած հաղորդագրությունը, թե հայկական զինված ուժերը իբր տեղաշարժեր են իրականացնում սահմանին:

ՔՈՐԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բելառուսի Հանրապետության պաշտպանության նախարարության Telegram-ի հաղորդագրության համաձայն՝ Գոմելի եւ Գրոդնոյի շրջաններում եռօրյա զորավարժությունները, որոնք սկսվել են երեքշաբթի՝ ապրիլի 2-ին, «նպատակ ունի վերապատրաստել սպաներին եւ տարածքային զորքերին իրենց շրջանները պաշտպանելու համար եւ պետք է ցույց տան, թե ինչպես պետք է գործել ռազմական դրություն մտցնելու դեպքում»:

Գոմելի մարզը սահմանակից է Ուկրաինային, Գրոդնոյի մարզը՝ Լիտվային եւ Լեհաստանին:

Երկրի պաշտպանության նախարարությունը պարզաբանում է, որ զորավարժությունները մեկնարկել են Բելառուսի եւ Ռուսաստանի «ժողովուրդների միասնության օրը»: 1996թ.-ի այս օրը երկու երկրների նախագահները ստորագրեցին «Բելառուսի եւ Ռուսաստանի համայնք ստեղծելու մասին» համաձայնագիրը. այսպես է հաղորդագրության մեջ բացատրվում ռազմական ոլորտում այդ երկրների համագործակցության պատճառը:

ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ԿՈՏԱՅՔՈՒՄ

ԲԱՐՁՐԱՁԱՅՆԵԼ ԵՆ ՀԵՏԱՔՐՔՐՈՂ ՀԱՐՑԵՐԸ

Կոտայքի մարզում հանդիպում է տեղի ունեցել ՀՀ կառավարության ներկայացուցիչների, ԱԺ պատգամավորների եւ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ու այս պահին Կոտայքի մարզում բնակվողների հետ՝ քննարկելու բնակապահովման ծրագիրը, ինչպես նաեւ ԼՂ-ից տեղահանված անձանց տրամադրվող սոցիալական աջակցության ծրագրերն ու հանդիպող խնդիրները:

Հանդիպմանը մասնակցել են ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Նարեկ Մանուկյանը, ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Դավիթ Խաչատրյանը, փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանի խորհրդական Աննա Գասպարյանը, ԱԺ պատգամավորներ Լիլիթ Ստեփանյանը, Ալխաս Ղազարյանը, Հռիփսիմե Հունանյանը, Դավիթ Առուշանյանը, ներկայացուցիչներ Միգրացիոն ծառայությունից, ինչպես նաեւ մարզպետի աշխատակազմի եւ համայնքապետարանների պատասխանատու աշխատակիցներ:

Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Դավիթ Խաչատրյանը տեղեկացրել է, որ ՀՀ կառավարության որոշմամբ կացարանի եւ կոմունալ վճարների աջակցության 40 + 10 ծրագիրը շարունակվելու է նաեւ տարեվերջ:

Նոր որոշմամբ՝ ծրագրի շահառու են հանդիսանալու նաեւ 2020 թվականի պատերազմի արդյունքում տեղահանված անձինք:

Ներկայացվել է նաեւ բնակարանի ապահովման ծրագիրը, որը քննարկման փուլում է:

Նախատեսվում է ծրագիրն իրականացնել 5 տարիների ընթացքում, իսկ այդ ընթացքում այն ընտանիքները, որոնք դեռեւս ձեռք բերած չեն լինի տուն, կշարունակեն պետության կողմից ստանալ որոշակի սոցիալական աջակցություն:

Ծրագրով նախատեսվում է բնակարան գնելու կամ կառուցապատելու համար մեկ անձի հաշվարկով հատկացնել 3-5 միլիոն դրամ՝ կախված բնակավայրից:

Առաջին հերթին ծրագրի շահառու են դառնալու 3 կամ ավել անչափահաս երեխա ունեցող ընտանիքները, զոհված զինծառայողների ընտանիքները, որոնք նույնպես ունեն անչափահասներ, ինչպես նաեւ հաշմանդամության 1-ին եւ 2-րդ կարգ ունեցող ընտանիքները:

Այնուհետեւ ծրագրից կօգտվեն 2 անչափահաս երեխա ունեցող ընտանիքները, ապա այլ խմբերի ներկայացուցիչները:

Բնակարանային ապահովման ծրագրի շահառու դառնալու գլխավոր պայմանը ՀՀ քաղաքացի դառնալն է, իսկ տվյալ բնակարանի կամ տան սեփականության իրավունքն իրենց կանցնի միայն 10-րդ տարվա ավարտին այդ ամբողջ ժամանակահատվածում տվյալ տանը կամ բնակարանում բնակվելու դեպքում:

Ներկայացվել են նաեւ ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց աշխատանքի, առողջապահական, կրթական, փաստաթղթերի կարգավորման հետ կապված ծրագրերին առնչվող որոշակի մանրամասներ:

Ներկաները բարձրաձայնել են իրենց հետաքրքրող բոլոր հարցերը, որոնց մի մասին տեղում տրվել են մանրամասն պարզաբանումներ եւ պատասխաններ, մյուսները գույքագրվել են կառավարության ներկայացուցիչների, Ազգային ժողովի պատգամավորների եւ Կոտայքի մարզպետի աշխատակազմի կողմից առաջիկայում քննարկելու եւ լուծելու նպատակով:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՆՐԱՆՔ ՄԻՇՏ ՄՆԱԼՈՒ ԵՆ

«Ընդամենը 8 տարի է անցել, բայց ահագին բան է փոխվել: Հիմա կողքի աչքով նայում ես, ասում ես՝ էս ի՞նչ արեցին տղերքը: Ցավում եմ, որ այն հողը, հայրենիքի այն կտորը, որի համար նրանք հերոսաբար մարտնչեցին, իրենց բաժին պատերազմում հաղթեցին, իրենց կյանքը տվեցին, այլեւս չկա կամ դեռ մերը չէ»,- ապրիլի 2-ին ասաց ապրիլյան 4-օրյա պատերազմում զոհված Ադամ Սահակյանի մայրը՝ Գայանե Անտոնյանը:

Նրա խոսքով՝ այսօր չկա որեւէ հայ, որը չի ափսոսում հողերի կորստի համար: Նա վստահ է, որ հայրենիքի պաշտպանության համար պայքարած տղաների կերպարներով երեխաներ են դաստիարակվում:

«Մի պատանի տղա կա, ասում էր՝ ուզում եմ գնամ Ադամի տուն, տեսնեմ՝ ինչ օծանելիք էր նա օգտագործում: Կարո՞ղ է այս տղան այլ արժեքներ ունենալ, ես չեմ հավատում: Կարո՞ղ է վաղը կամ մյուս օրը հայրենիքը նրա համար թանկ չլինի, ես չեմ հավատում: Մեր տղաները, Ադամը եւ նրա նմանները կրթում են այս նոր սերնդին: Կապ չունի՝ որքան ժամանակ կանցնի, նրանք միշտ մնալու են պատմության մեջ: Ես դա մարդկանց արձագանքներից եմ հասկանում, եւ դա ինձ ապրեցնում է»,- ասում է Գայանե Անտոնյանը:

Նա պատմում է, որ այս տարիների ընթացքում 2 գիրք եւ 6 երգ է գրվել Ադամի մասին, սակայն ոչ ընտանիքի միջոցներով, այլ հեղինակների ցանկությամբ:

Նրա խոսքով՝ հնարավոր է, որ կան տղաներ, որոնք այդքան ճանաչված չեն, սակայն դա էական չէ. Ադամի կերպարում ամբողջացվում են բոլոր հերոսները՝ ամեն մեկն իր տեղում ու ժամանակում: Ադամի մայրը կասկած չունի, որ տղաների անունները ոսկե տառերով են գրվելու պատմության գրքերում:

«Ես հաճախ աղոթում եմ այն տղաների համար, որոնք հիմա կանգնած են սահմանին եւ ապահովում են իմ թոռնիկի հանգիստ քունը: Եթե մենք շնորհակալ չլինենք նրանց, չենք ունենալ ո՛չ ընտանիք, ո՛չ էլ երկիր»,-ասում է Գայանե Անտոնյանը:

Հիշեցնենք, որ ապրիլի 2-ին լրացավ ապրիլյան քառօրյա պատերազմի 8-րդ տարելիցը: 2016 թվականի ապրիլյան մարտերի հետեւանքով հայկական կողմը ունեցել է ավելի քան 100 զոհ եւ կորցրել է մոտ 800 հա տարածք:

ԽՈՍՏՈՒՄՆԱԼԻՑ ԷՐ

«Մեր առաքելությունը Սյունիքի մարզկենտրոն Կապան քաղաքում իրականացված է»,- Facebook-ի իր էջում գրել է Արցախի ԱԺ «Արդարություն» խմբակցության անդամ Մետաքսե Հակոբյանը:

««Արդարություն եւ վերադարձ» հայ ազգային եւ մշակութային արժեքների պահպանման ՀԿ-ի կողմից մշակված «Արցախի երիտասարդության որոշիչ ձայնը» ծրագրի մեկնարկը մեզ համար խոստումնալից էր, սպասելիքներն առավել էին, տպավորությունները՝ անասելի մտահոգիչ:

Մենք շարունակում ենք լսել, մեզ սպասում են եւս 9 մարզում բռնի տեղահանված հայրենակիցներ, որոնց հետ քննարկելու ենք բոլորիս ներկայի եւ ապագայի վերաբերյալ օր օրի ավելի ահագնացող խնդիրները, որոնց լուծումը մեզանից յուրաքանչյուրի ձեռքում է:

Հաջորդիվ մենք կլինենք հայրաքաղաք Գյումրիում»,- նշել է նա:

ՀԻՄՆԱՎՈՐՎԵԼ Է

ՕՐԻՆԱԽԱԽՏ ՎԱՐՔԱԳԻԾ Է ԴՐՍԵՎՈՐԵԼ

ՀՀ ՔԿ Կոտայքի մարզային քննչական վարչության Աբովյանի քննչական բաժնում ավարտվել է Երեւան քաղաքի բնակիչ Ս.Վ.-ի կողմից մի շարք առերեւույթ հանցագործություններ կատարելու առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությունը:

Քրեական վարույթի շրջանակներում ձեռնարկված միջոցառումների արդյունքում հիմնավորվել է, որ 2024թ. հունվարի 24-ին՝ 02:00-ի սահմաններում, ստացված տեղեկատվությունն իրացնելու արդյունքում ՀՀ ՊԾ Երեւան քաղաքի պարեկները Երեւան քաղաքի Ազատության պողոտայի եւ Թբիլիսյան խճուղու հատման վայրում նկատել են «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենա, որի վարորդը, որը, ինչպես պարզվել է հետագայում, եղել է Ս.Վ.-ն, իրավական նորմերի նկատմամբ բացահայտ արհամարհական վերաբերմունք ցուցաբերելով, իր անձի առավելությունը հասարակության մյուս անդամների նկատմամբ ի ցույց դնելու նպատակով ավտոմեքենան մեծ արագությամբ վարել է երթեւեկությանը հակառակ ուղղությամբ՝ չենթարկվելով լուսացույցների կարմիր արգելակող ազդանշաններին եւ պարեկային ծառայության աշխատակիցների «կանգ առ» հրահանգին՝ այդկերպ վտանգ ստեղծելով երթեւեկության մյուս մասնակիցների համար: Արդյունքում տարածքում գործող սննդի կետի մոտ նա ավտոմեքենայով հարվածել է «Օպել» մակնիշի ավտոմեքենայի՝ վնասելով այն:

Չենթարկվելով ոստիկանների օրինական պահանջներին՝ Ս.Վ.-ն շարունակել է օրինախախտ վարքագիծ դրսեւորել եւ նկատելով ավտոմեքենայով իրեն հետապնդող ոստիկաններին ու փորձելով խոչընդոտել նրանց գործունեությանը՝ իր կողմից վարվող ավտոմեքենայով հարվածել է ոստիկանների ծառայողական ավտոմեքենային եւ վնասել այն:

Այդ ընթացքում, փորձելով խուսափել պարեկների հետապնդումից, Ս.Վ.-ն Կոտայքի մարզի Պտղնի համայնքի վարչական տարածքում ավտոմեքենան կայանել է ճանապարհի երթեւեկելի հատվածում եւ, դուրս գալով ավտոմեքենայից, դիմել փախուստի, սակայն ոստիկանության ծառայողների կողմից բռնվել է: Այնուհետեւ շարունակելով խոչընդոտել վերջիններիս օրինական գործունեությանը՝ նա բռնություն է գործադրել ոստիկանների նկատմամբ՝ ոտքով հարվածելով նրանցից մեկին, եւ հայհոյել է հավաքված մարդկանց ներկայությամբ:

Անհրաժեշտ միջոցառումների արդյունքում կարգազանց վարորդը տեղափոխվել է ոստիկանության բաժին, որտեղ պարզվել է, որ վերջինս չունի տրանսպորտային միջոց վարելու իրավունք: Նա նաեւ հրաժարվել էր սթափության զննության ենթարկվելուց, իսկ անձնական խուզարկությամբ նրա մոտ հայտնաբերվել էր «Բուպրենորֆին» տեսակի թմրամիջոց:

Նշանակված դատաապրանքագիտական փորձաքննության եզրակացությամբ՝ հակաօրինական վերոնշյալ գործողությունների ընթացքում ինչպես ՀՀ ՆԳՆ հաշվեկշռում գտնվող «SKODA OCTAVIA 1.4» մակնիշի ավտոմեքենան, այնպես մյուս երկու ավտոմեքենաները վնասելու հետեւանքով նրա կողմից պատճառված ընդհանուր նյութական վնասը կազմել է ավելի քան 1.500.000 ՀՀ դրամ:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա՝ Ս.Վ.-ին մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 264-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, 344-րդ հոդվածի 2-րդ մասով, 396-րդ հոդվածի 1-ին մասով, 452-րդ հոդվածի 2-րդ մասով եւ 452-րդ հոդվածի 3-րդ մասով: Նրա նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը:

Նախաքննությունն ավարտվել է, եւ վարույթի նյութերն ուղարկվել են հսկողություն իրականացնող դատախազին՝ մեղադրական եզրակացությունը հաստատելու եւ դատարան ուղարկելու համար:

ԹՎԵՐՈՎ

ՆԳՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ՝ ԵՐԿՈՒ ՕՐՎԱ ՀԱՄԱՐ

Ըստ ոստիկանության օպերատիվ հաղորդագրությունների ամփոփագրերի՝ ապրիլի 1-ից 2-ը Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 77 դեպք, որից 3-ը՝ նախկինում կատարված:

Մասնավորապես՝ բացահայտվել են մարմնական վնասվածք պատճառելու 12, խարդախության՝ 11, տրանսպորտային միջոց վարելու իրավունքից զրկված կամ այդ իրավունքը կասեցված կամ այդ իրավունքը չունեցող անձի կողմից տրանսպորտային միջոց վարելու՝ 9, ֆիզիկական ներգործության՝ 8, հոգեկան ներգործության՝ 7, զենք-զինամթերքի առգրավման եւ թմրամիջոցի հայտնաբերման՝ 4-ական, գույքը ոչնչացնելու կամ վնասելու ու պաշտոնեական լիազորությունների չարաշահման՝ 2-ական, մարդու առեւանգման, անձնական ունեցվածքի գողության, վստահված գույքը հափշտակելու, շորթման, ապօրինի ձեռնարկատիրական գործունեության, կաշառակերության, պաշտոնեական կեղծիքի կամ անփութության, թմրանյութի իրացման, անվտանգության պահանջներին չհամապատասխանող ապրանքների շրջանառության, սուտ մատնության, անհետաձգելի միջամտության կամ պաշտպանական որոշումը դիտավորությամբ չկատարելու, բնակարանի անձեռնմխելիությունը խախտելու, երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, անձին ազատությունից զրկելու եւ բնակարանի անձեռնմխելիությունը խախտելու՝ 1-ական դեպք:

Հայտնաբերվել են 1 անհետ կորած եւ 3 հետախուզվող:

Գրանցվել է զենք-զինամթերքի կամավոր հանձնման 2 դեպք:

Նախկինում կատարված հանցագործության դեպքերից բացահայտվել է բնակարանային գողության 2, մարմնական վնասվածք պատճառելու՝ 1 դեպք:

Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 12 պատահար. 16 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՎԻՃԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ–ԾԵԾԿՌՏՈՒՔ՝ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆԸ

SHAMSHYAN.com-ի տեղեկություններով՝ մարտի 31-ին վիճաբանություն-ծեծկռտուք է տեղի ունեցել Երեւանում: Ժամը 14:25-ի սահմաններում Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոն է զանգահարել Երեւանի բնակիչ 57-ամյա Դավիթ Գ.-ն եւ հայտնել, որ Ներքին Չարբախի գերեզմանատանը կռիվ է, այնուհետեւ ոստիկանություն է զանգահարել Անահիտ Գ.-ն եւ հայտնել, որ Դավիթ Գ.-ի ընտանիքի անդամները թույլ չեն տվել իր որդուն՝ Սուրեն Գ.-ին, մուտք գործել գերազմանատուն, եւ նրանց միջեւ ծեծկռտուք է տեղի ունեցել:

Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, ժամը 15:50-ի սահմաններում «Աստղիկ» բժշկական կենտրոնից հաղորդում է ստացվել, որ «գանգուղեղային վնասվածք» ախտորոշմամբ բուժօգնության է դիմել Երեւանի բնակիչ 32-ամյա Նարեկ Գ.-ն, ով վնասվածքը ստացել է Ներքին Չարբախի գերեզմանատանը ծեծի հետեւանքով:

Հիվանդանոց է մեկնել ոստիկանության Չարբախի բաժանմունքի օպերատիվ խումբը՝ բաժանմունքի պետ Արման Կիրակոսյանի գլխավորությամբ:

Ոստիկանները պարզել են, որ Ներքին Չարբախի գերեզմանատանը Սուրեն Գ.-ն կենցաղային հարցի շուրջ վիճաբանել է հորեղբոր՝ Դավիթ Գ.-ի եւ նրա որդիների՝ Միեր Գ.-ի ու Նարեկ Գ.-ի հետ, որի ժամանակ Սուրեն Գ.-ն բենզինով շիշը փորձել է լցնել Միեր Գ-ի վրա եւ փայտով հարվածել է Նարեկ Գ-ին՝ պատճառելով մարմնական վնասվածք:

Դեպքի փաստով ոստիկանության Չարբախի բաժանմունքում նյութեր են կազմվել, որոնք փոխանցվել են Հայաստանի քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Շենգավիթի քննչական բաժին, որտեղ դեպքի փաստով նախաձեռնվել է քրեական վարույթ:

Ծանուցում. ենթադրյալ հանցանքի մեջ կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ ապրիլի 1-ից 2-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 77 դեպք, որոնցից 3-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔ

ԱՌԱՆՑ ՆՈՐ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ

Նիկոլ Փաշինյանի դասընկեր, նրա հարսանիքի քավոր, Նիկոլ Փաշինյանի որոշումով 2021թ. ապրիլի 8-ին Տավուշի մարզպետ նշանակված Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում ենք արել՝ նրան հարցնելով՝ նախկինում ադրբեջանաբնակ 4 գյուղերի՝ Բաղանիս-Այրումի, Ղզլհաջիլիի, Աշաղը Ասքիպարայի (Ներքին Ոսկեպար), Խերմիլիի տարածքները Ադրբեջանին հանձնելուց հետո Իջևան-Նոյեմբերյան, Հայաստան-Վրաստան տրանսպորտային հաղորդակցությունն ապահովելու համար մարզի սահմանամերձ այդ տարածքներում ինչ նոր ճանապարհներ են նախատեսված կառուցել, քանի կիլոմետր երկարությամբ, որքան արժեքներով: Մարտի 29-ին ստացել ենք մարզպետի պատասխանը, ուր նշված է. «Նման որոշում դեռ կայացրած չէ»: Նման որոշում չկա, սակայն մարտի 18-ին Ոսկեպարի մշակույթի տանը վարչապետ Նիկոլ Փաշինյանը, ի պատասխան Ոսկեպարի բնակիչների մտահոգությունների, թե 4 գյուղերի տարածքները Ադրբեջանին հանձնելուց հետո Ոսկեպարը ճանապարհի խնդիր է ունենալու, հայտարարել է, որ Ոսկեպարում թունել է կառուցվելու, կառուցվելու է Ենոքավան-Ջուջևան ճանապարհը: Սահմանագոտու այդ հատվածում նոր ճանապարհներ կառուցելու որոշում չկա, այդ դեպքում 4 գյուղերի տարածքները Ադրբեջանին հանձնելուց հետո ինչպե՞ս են իրականացվելու Ոսկեպարի կապը արտաքին աշխարհի հետ, Իջևան-Նոյեմբերյան կապը եւ այդ հատվածով Հայաստան-Վրաստան տրանսպորտային հաղորդակցությունը:

ԽԱԲՈ՞ՒՄ ԵՆ

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հարցրել ենք՝ ՀՀ կառավարությունը 2022 թվականին Ոսկեպար գյուղի տարածքում ռուսական զինուժի կացարան կառուցելու համար 2 հեկտար նվիրաբերելու առաջարկով դիմել է Նոյեմբերյան համայնքին, այդտեղ կառուցված ռուսական զորանոցն արդյոք ինչ գործառույթներ, առաքելություն ունի Ոսկեպարի սահմանագոտում: Մարզպետարանից ստացված պատասխանում նշված է. «Ռուսական զինուժի կացարան կառուցելու առաքելությունը կայանում է տարածաշրջանում միայն խաղաղարար իրավիճակի նպաստմանը»: Հայկ Ղալումյանը նաեւ ՔՊ կուսակցության վերահսկող հանձնաժողովի նախագահն է: ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը, որը նաեւ ՔՊ կուսակցության վարչության անդամ է, հայտարարել է, որ ռուսները մեզ խաբեցին, վերջում փորձեցին ներքաշել նոր պատերազմի մեջ: Ոսկեպարում՝ սահմանի եզրին կառուցված զորանոցը նպաստո՞ւմ է տարածաշրջանում խաղաղարար իրավիճակին, թե՞ ռուսները մեզ խաբում են, փորձում նոր պատերազմի մեջ քաշել:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՆՈՐ ՆԱԽԱԳԻԾ

ԱՊԱՍՏԱՆ ՀԱՅՑՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Կառավարությունն առաջարկում է հասարակական կազմակերպություններին հնարավորություն ընձեռել վերահսկողություն իրականացնելու ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոնի գործունեության նկատմամբ: ԱԺ պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նիստում նախագիծը ներկայացրեց Ներքին գործերի նախարարության միգրացիայի եւ քաղաքացիության ծառայության պետ Արմեն Ղազարյանը՝ մանրամասնելով ««Փախստականների եւ ապաստանի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը:

Հիմնական զեկուցողի խոսքով՝ ակնկալվում է, որ նման վերահսկողության առկայությունը Միգրացիայի եւ քաղաքացիության ծառայությանը հնարավորություն կտա վեր հանել ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոնում առկա խնդիրները եւ այնտեղ բնակվող անձանց իրավունքների պաշտպանության համար անհրաժեշտ քայլերն ավելի արդյունավետ կազմակերպել:

Նախագծի ընդունման արդյունքում կսահմանվեն համապատասխան իրավական հիմքերն ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոնում հասարակական վերահսկողություն իրականացնելու նպատակով հասարակական դիտորդների խմբի ստեղծման համար, ինչը կամրապնդի հասարակական կազմակերպությունների ու Միգրացիայի եւ քաղաքացիության ծառայության համագործակցությունը, հնարավորություն կստեղծի ապահովելու ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոնի գործունեության թափանցիկությունը:

ՀՀ ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Գեղամ Նազարյանը հետաքրքրվեց ապաստան հայցողների թվով, եւ թե որ երկրներից են ապաստան հայցողները, ինչին ի պատասխան՝ Արմեն Ղազարյանը հայտնել է, որ 2020 թվականին ապաստան հայցողների թիվը կազմել է 206, 2021 թվականին՝ 260, 2022 թվականին՝968, ինչը հիմնականում պայմանավորված է եղել Ուկրաինայում տեղի ունեցող դեպքերով, 2023 թվականին՝ 817 անձ:

Առաջին տեղերում ավանդաբար Մերձավոր Արեւելքի երկրներից՝ Իրաքից, Սիրիայից, Եգիպտոսից դիմողներն են, 2022 եւ 2023 թվականներին միտումը փոխվել է. հիմնականում դիմել են Ուկրաինայից, Սիրիայից, Իրաքից: Հնդկաստանի քաղաքացիներից ապաստանի դիմումներ չեն եղել, ստացվել է 1-2 դիմում:

Հարակից զեկուցող, «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Ալխաս Ղազարյանը դրական գնահատեց նախագիծը՝նշելով, որ այն միտված է ապաստան հայցողների իրավունքների պաշտպանությանը, ինչպես նաեւ ժամանակավոր տեղավորման կենտրոնի գործունեության թափանցիկության ապահովմանը: Հանձնաժողովը դրական եզրակացություն է տվել նախագծին:

«10 ՄԼՆ ԾԱՌԱՏՈՒՆԿ»

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆԸ ԿՅԱՆՔԻ ՉԻ ԿՈՉՎԵԼ

Հայաստանում «10 մլն ծառատունկ» ծրագիրը պետք է մեկնարկեր դեռ 2020 թվականին: Այս մասին ՀՀ վարչապետ Փաշինյանն ազդարարել էր «Գլոբալ ինովացիոն ֆորում 2019. փոխակերպելով բանականությունը» համաժողովի բացման իր ելույթում:

Նրա որակմամբ՝սա մի ամբիցիոզ ծրագիր է ենթադրում: 10 մլն ծառը, համաձայն վարչապետ Փաշինյանի, պետք է խորհրդանշեր 10 մլն հայության միասնությունը Հայաստանի պետականության, Հայաստանի Հանրապետության շուրջ եւ Հայաստանի Հանրապետությունում: Շրջակա միջավայրի նախարարի նախկին տեղակալ Վարդան Մելիքյանը 2020 թվականի փետրվարին ասուլիսում նշել էր. «Բելառուսից նշեցին, որ պատրաստ են տրամադրել մինչեւ 10 մլն սոճի, մինչեւ մեկ մլն կեչի: Ղազախստանից ենք տեսակների մեծ ցանկ ստացել: Այժմ աշխատում ենք Լեհաստանի հետ, նախատեսում ենք նաեւ համագործակցել Ֆինլանդիայի հետ: Առաջարկները նեռառում են թե՛ վճարովի, թե՛ անվճար տնկիներ»: Այս նույն փոխնախարարը 2020 թվականի օգոստոսին ազատվեց պաշտոնից՝ նախագիծը կիսատ թողնելով: Հավելենք, որ նա միջգերատեսչական հանձնաժողովի գլխավորներից մեկն էր: Նախկին փոխնախարարի մեջբերումներից հասկանում ենք, որ ցանկություն կար ծառ տնկելու, բայց գումար չկար ծրագիր իրականացնելու համար: Հնարավորություն չկա, այդ պատճառով ՀՀ բարձր ատյաններից բնության կարեւորության մասին վանկարկող իշխանությունը սեփական անտեղյակությունը թաքցնելու համար չեղարկեց ծրագիրը: Շրջակա միջավայրի նախարար Հակոբ Սիմիդյանն էլ, ամփոփելով 2023 թվականը, նշեց, որ 2023 թ.-ին 314 հա անտառապատման աշխատանքներ են իրականացվել: Հետաքրքրվելով, թե ինչ ընթացք է ստացել «10 մլն ծառատունկ» ծրագիրը՝նա նշել է, որ ծրագիրը հայտնի դեպքերի պատճառով, այն է՝ Կորոնավիրուսային վարակը եւ 44-օրյա պատերազմը, չի կայացել: «Ամբողջ միտքը, որ 2020 թվականի 10-րդ ամսվա 10-րդ օրը 10 մլն ծառ տնկվեր, ըստ էության, հայտնի պատճառներով չիրականացավ: Ծրագիրը նաեւ 10-երի խորհուրդն էր ունեցել: Մենք չենք վերադարձել ծրագրի իրականացմանը, բայց ես արդեն ասացի, որ 2024 թվականի համար նախատեսել ենք 1000 հա անտառ տնկել. դա, եթե չեմ սխալվում, 1 մլն ծառի մասին է»,- ասել է Սիմիդյանը: Փաստացի Կառավարության ծրագիրը՝ «10 միլիոն ծառ» բնապահպանական նախաձեռնությունը, այդպես էլ կյանքի չի կոչվում: Կոտայքի եւ Արմավիրի մարզում իրականացված համապետական ծառատունկի արդյունքները դիտելով՝ պարզեցինք, որ ծառերի մի մասը տնկվել է չոռոգվող տարածքներում, մի մասն էլ հատկացվել է արդեն չորացած վիճակում, եւ այդ պատճառով ծառատունկ չի կազմակերպվել: Կարող ենք ենթադրել, որ ծրագիրը ձեւական բնույթ է կրել եւ ամենեւին նպատակ չի հետապնդել ավելացնել երկրում կանաչ տարածքները:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 12 պատահար. 16 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԱՆՑՈՒԴԱՐՁ

ԴՈՒՐՍ ԵՆ ՀԱՆՈՒՄ

Ապրիլի 2-ին Երեւանի 33-րդ թաղամասից՝ Ֆիրդուսից, բնակիչները ArmLur.am-ին ահազանգում են՝ տարիների խնդիրը շարունակում է մնալ չլուծված, Ֆիրդուսի բնակիչները կրկին կանգնել են փողոցում մնալու վտանգի առաջ:

«Եկել են տնից հանում են: Ասում են՝ սեփականության թուղթ չունեք, բայց դա կապ չունի. 5 սերունդ ստեղ ապրում ենք: Եկել են ասում են՝վեշերը հանե՛ք: Եթե մի քիչ էլ չհանենք մեր իրերը, բռնի գործողությամբ կհանեն: Հիմա ստեղ 25 հոգի գրանցված են, ու բոլորին էլ դուրս են հանում»,- պատմում է Ֆիրդուսի բնակիչը: Նրանց հավելյալ ժամանակ չեն տրամադրել: Հիշեցնենք, որ Ֆիրդուսի բնակիչները անցած տարի նույնպես այս նույն խնդրով իրականացնում էին բողոքի ակցիա:

ԱՂՄՈՒԿԻՑ ՀԵՌՈՒ

Անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների 27.8%-ը կատարվել է մայրաքաղաք Երեւանում: Անշարժ գույքի շուկայում մեկնարկած շինարարական բումը, որը աստիճանաբար դառնում է օդի աղտոտման պատճառ, քիչ-քիչ տեղափոխվում է մարզեր: Նոր կառուցվող բնակարանների հիմքերն արդեն փորված են, եւ կառուցապատողները շարունակում են դիտարկել նաեւ մարզային կենտրոնական կամ բնակարանաշինության համար հարմար վայրերը: Այս պահին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ամենամեծ տոկոսը դիտվել է Կոտայքի մարզում՝ 16.6%, իսկ Արարատի մարզում՝9.5%, Արմավիրի մարզում՝9.1%: Այս թվերը վկայում են, որ, Երեւանից բացի, մարդիկ նախընտրում են մերձերեւանյան մարզերում ձեռք բերել անշարժ գույք, քաղաքին մոտ, բայց աղմուկից հեռու: Անշարժ գույքի նկատմամբ իրականացված ընդհանուր գործարքների թիվը 2023 թվականի դեկտեմբերին կազմել է 21 668 միավոր, իսկ 2022 թվականի նոյեմբերին 20 552 միավոր:

ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Երեւանի «Տեղական բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության գործողությունների նոր ծրագիրը մշակելու նպատակով Երեւանի քաղաքապետարանն ընդունում է առաջարկներ: Առաջարկները պետք է ուղղված լինեն հետեւյալ ոլորտների բարեփոխմանը՝

- աղբահանություն,
- հասարակական տրանսպորտ,
- զբոսաշրջություն,
- առողջապահություն,
- բնակչությանը մատուցվող ծառայություններ,
- կայուն սոցիալական միջավայրի ապահովում,
- մասնակցային կառավարում,
- կանաչ տնտեսություն,
- նշե՛ք Ձեր կողմից առաջարկված ոլորտը:

Ներկայացված առաջարկները պետք է համապատասխանեն Բաց կառավարման գործընկերության սկզբունքներին, բարելավեն հանրային եւ համայնքային կառավարման ոլորտը, այն դարձնեն առավել քաղաքացիակենտրոն, թափանցիկ, նորարար, հաշվետու եւ մասնակցային:

Առաջարկները կարող են ներկայացվել մինչեւ 2024 թվականի ապրիլի 16-ը՝ ուղարկելով ogp@yerevan.am էլեկտրոնային հասցեին:

ՀԱՆԴԻՊՈՒՄ

ՊԱՇՏՊԱՆԸ՝ ԱՍՈՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանն ապրիլի 1-ին ասորական Նոր տարվա՝ Հաբ-Նիսանի առթիվ այցելել է Հայաստանում ասորական ամենախոշոր՝ Արարատի մարզի Վերին Դվին համայնք:

Այս մասին հայտնում են Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակից:

Աղբյուրի տեղեկատվությամբ՝ մարդու իրավունքների պաշտպանին դիմավորել են Վերին Դվին համայնքի ղեկավար Լյուդմիլա Պետրովան եւ Արեւելքի ասորական ընդհանրական սուրբ առաքելական եկեղեցու հոգեւոր հայր Տեր Նիկադիմ Յուխանաեւը:

Նրանք Պաշտպանին ներկայացրել են Հայաստանում բնակվող ասորիների խնդիրները, ազգային փոքրամասնությունների ինքնության տարրերի պահպանմանը վերաբերելի առանձին հարցեր:

Անահիտ Մանասյանը նշել է, որ, որպեսմարդու իրավունքների պաշտպան, կարեւորում է ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց ինքնության պահպանման, իրենց ավանդույթների, կրոնի, լեզվի եւ մշակույթի պահպանման ու զարգացման իրավունքների երաշխավորումը:

«Առաջնահերթ եմ համարում բոլորիս ջանքերի մեկտեղումը՝ մեր երկրում ազգային փոքրամասնությունների իրավունքների ապահովման եւ արդյունավետ պաշտպանության հարցում»,- ասել է Անահիտ Մանասյանը:

Պաշտպանը հատուկ ընդգծել է, որ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքներին վերաբերելի տարբեր խնդիրները եւ դրանց հաղթահարման առնչությամբ Պաշտպանի առաջարկներն ամփոփվել են ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների եւ ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդման շրջանակում:

Այցի ընթացքում Անահիտ Մանասյանը հարգանքի տուրք է մատուցել քառասունչորսօրյա պատերազմի զոհերի հիշատակին՝ ծաղիկներ խոնարհելով նրանց հուշակոթողին: Պաշտպանն այցելել է նաեւ Հայաստանի արեւելքի ասորական կաթողիկոսության սուրբ Առաքելական եկեղեցի: Տեր Նիկադիմ Յուխանաեւը Պաշտպանին ներկայացրել է եկեղեցու պատմությունը, կրոնական առանձնահատկությունները: Վերին Դվին կատարած այցի շրջանակներում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը հանդիպել է համայնքի միջնակարգ դպրոցի աշակերտների եւ ուսուցչական անձնակազմի հետ: Հանդիպման ընթացքում Անահիտ Մանասյանը ներկայացրել է Պաշտպանի հաստատության աշխատանքի ուղղությունները, անդրադարձել երեխաների, վերջիններիս կրթության իրավունքին, խտրականության, անհանդուրժողականության, բուլինգի դեմ պայքարին:

«Անհնար է ունենալ մարդու իրավունքների պաշտպանության պատշաճ համակարգ առանց հանդուրժող եւ համերաշխ միջավայրի, իսկ հանդուրժող եւ համերաշխ միջավայրը պարզապես հռչակագրային գաղափար չէ. վերջինիս ձեւավորմանը յուրաքանչյուրս պետք է նպաստի իր ամենօրյա վարքագծով: Մենք պետք է լինենք արժեքների տարածման առաջամարտիկ, այլ ոչ հակաարժեքների հետեւորդ»,-նշել է Պաշտպանը:

Անահիտ Մանասյանն ընդգծել է, որ ազգային փոքրամասնությունների իրավունքների հետ կապված՝ պետությունը, ի թիվս այլնի, ունի պոզիտիվ պարտավորություն՝ երաշխավորելու եւ նպաստելու նրանց մշակույթի, կրոնի, լեզվի, ավանդույթների պահպանմանը, եւ այս առումով չափազանց կարեւոր է նաեւ ազգային փոքրամասնությունների համայնքների ակտիվ ներգրավվածությունը: Այցի վերջում Պաշտպանն ու հանդիպման մասնակիցները երկուստեք շնորհակալություն են հայտնել հետաքրքիր եւ բովանդակալից քննարկման համար:

ԽՆԴԻՐՆԵՐ ԵՆ ԱՌԱՋԱՑԵԼ

ՆԵՐԴՐՎԵԼ Է ՆՈՐ ՀԱՄԱԿԱՐԳ

Հայաստանի Հանրապետությունում 2023-2025 թվականներին փուլային եղանակով ներդրվում է Ֆիզիկական անձանց եկամուտների համընդհանուր հայտարարագրման համակարգը: Մինչ այդ հայտարարագիր ներկայացնող անձանց ցանկը հստակ սահմանված էր: Ներդրվել է նոր համակարգ, սակայն ինֆորմացիոն ծանրաբեռնվածությունը հաշվի չի առնվել, եւ հայտարարաու անձանց շրջանում խնդիրներ են առաջացել:

ArmLur.am-ը պարբերաբար ահազանգեր է ստանում, որ թեեւ ներդրվել է նոր համակարգը, որը ենթադրում է նոր թարմացումների հետ մեկտեղ համակարգի բարելավում, սակայն ամեն բան հակառակն է: Հայտարարագրման համակարգի համար նոր պայման է ունենալ ID նույնականացման քարտ, որը անհրաժեշտ կլինի կցել համակարգչին համապատասխան սարքի միջոցով: Սա դեռ ամենը չէ. կա նաեւ երկրորդ խնդիր եւս: Այն անձինք, որոնք չունեն ID նույնականացման քարտ, չեն կարող լրացնել հայտարարագիր առանց դրա, սակայն կա երկրորդ տարբերակ լրացնել հեռախոսային համարով: Թվում է, թե երկրորդ տարբերակով հարցը կլուծվի, սակայն խնդիրը հասնում է մինչեւ անձնագրայինների դռները: ArmLur.am-ին դիմած քաղաքացու խնդրից հասկանում ենք, որ հարցը ոչ թե ՊԵԿ-ի կամ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի տիրույթում է, այլ ՆԳՆ-ի, այսինքն՝ անձնագրային բաժանմունքների: Հերթերն այնքան անտանելի են դարձել, որ նույնականացման քարտ ձեռք բերելու համար այսօր գրանցվելու դեպքում միայն հունիսի վերջին շաբաթը կկարողանաք ձեռք բերել այն:

Անձնագրային կետերում հերթերի անկանոնության հարցերով ահազանգերը չեն դադարում նույնիսկ մարզերում: Նախկինում հերթագրման համակարգը ներդրվեց հենց նման խնդիրներից խուսափելու համար, սակայն ինչպես տեսնում ենք, այն չի արդարացրել պահանջվածը:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» 4

Հարգելի՛ հաճախորդներ,

տեղեկացնում ենք, որ «Յունիբանկ»-ի «Քոչար» մասնաճյուղում /Երեւան, Հ. Քոչար 19, 13/1/ 01.04.2024թ.-31.07.2024թ. ներառյալ իրականացվելու են վերանորոգման աշխատանքներ, որոնց պատճառով նշված ժամանակահատվածում հաճախորդների սպասարկում չի իրականացվի: «Քոչար» մասնաճյուղն իր աշխատանքը կվերսկսի 01.08.2024թ-ից:

Հայցում ենք Ձեր ներողամտությունը պատճառած անհարմարությունների համար եւ առաջարկում այդ ժամանակահատվածում սպասարկվել «Յունիբանկ»-ի մոտակա այլ մասնաճյուղերում՝ «Կոմիտաս» /Երեւան, Կոմիտասի պող. 27, 19շ. եւ Կոմիտասի պող. 27, բն.18/

«Հաղթանակ» /Երեւան, Կոմիտասի 62 թիվ 94/:

«Յունիբանկ»-ի մասնաճյուղերի հասցեներին եւ աշխատաժամերին կարող եք ծանոթանալ www.unibank.am կայքում:

Տեղեկատու կենտրոն՝ +374 10 59 55 55:

Բանկը վերահսկվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

«ԳՈՅ»

ԹԱՏՐՈՆԻ ՄՈՒՏՔԸ ՓԱԿ Է ԵՂԵԼ

«Գոյ» թատրոնի ռեժիսորներն ու դերասանները ապրիլի 2-ին բողոքի ակցիա էին կազմակերպել թատրոնի մոտ, քանի որ ցանկացել են թատրոն մտնել «Գոյ»-ի գլխավոր մուտքից ու պարզել, որ այն փակ է:

Ստեղծագործողները մտել են Գաբրիել Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոն, որին ՀՀ կառավարության որոշմամբ միացվել է «Գոյ»-ը՝ հասկանալու, թե ինչու է «Գոյ»-ի մուտքը փակ:

Այնտեղ նրանց հանդիպեց ակադեմիական թատրոնի փոխտնօրեն Հրաչ Ներսիսյանը:

Նրա խոսքով՝ ներս մտնելու համար «Գոյ» թատրոնի ներկայացուցիչները պետք է անվտանգության համակարգում իրենց տվյալները լրացնեն, ինչից հետո կունենան քարտեր, որոնց օգնությամբ կարող են մտնել թատրոն: «Բնական է, որ նրանք հիմա չունեն քարտեր, քանի որ դրանք պետք է պատվիրվեն: Սունդուկյան թատրոն բոլորը էլեկտրոնային քարտով կամ չիպով են ներս մտնում»,-շեշտեց Ներսիսյանը:

«Գոյ» թատրոնի դերասան Սամվել Թոփալյանն էլ շեշտեց, որ աշխատանքային պայմանագիր կնքել է «Գոյ» թատրոնի հետ եւ մինչեւ 2024 թվականի ապրիլի 22-ը չի համարվում Սունդուկյանի անվան թատրոնի աշխատակից:

«Գոյ»-ի դերասան Աշոտ Տեր-Մաթեւոսյանն էլ հիշեցրեց՝ իրենց ծանուցել են, որ պետք է գան ու թարմացված պայմանագիր ստորագրեն մինչեւ ապրիլի 22-ը: «Կան մարդիկ, որ մինչեւ ապրիլի 22-ը իրավունք ունեն մտածելու, հետո այդ թարմացված պայմանագիրը ստորագրելու, կամ ոչ: Քանի որ մենք ունենք մինչեւ ապրիլի 8-ը, ապրիլի 15-ը եւ ապրիլի 22-ը ժամանակ, ըստ ծանուցման ամսաթվի, մենք պահանջում ենք, որ «Գոյ»-ի մուտքը բաց լինի, եւ մինչեւ հին պայմանագրի լրանալը մեր աշխատանքային տարածք մտնենք «Գոյ»-ի մուտքով: Երբ լրանա ժամկետը, կմտածենք՝ թարմացնել այն, թե ոչ»,-ասաց դերասանը:

Հրաչ Ներսիսյանն էլ ընդգծեց, որ 2024 թվականի հունվարի 30-ից, ՀՀ կառավարության որոշման համաձայն, «Գոյ» թատրոնը միացվել է Սունդուկյանի անվան թատրոնին, ուստի բոլորը պետք է Սունդուկյանի անվան թատրոնի ծառայողական մուտքով ներս մտնեն:

«Գոյ»-ի ներկայացուցիչներից մի քանիսը լրագրողների ուղեկցությամբ մտան «Գոյ» թատրոնի տարածք, որտեղ «Գոյ»-ի ռեժիսոր Սարգիս Արզումանյանն ասաց՝ հույս ունի, որ մի օր թատրոնում կրկին հանդիսատես կլինի:

Ավելի վաղ հայտարարվել էր, որ, ՀՀ կառավարության որոշմամբ, նախատեսվում է «Գոյ» թատրոնի վարչական հատվածը կրճատել, իսկ թատրոնի ստեղծագործական կազմը՝ «Գոյ» թատերախումբ անունով, կշարունակի գործունեություն ծավալել Գաբրիել Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի տանիքի ներքո: ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը, որը նախագծի հեղինակն է, վստահեցրել էր, որ այդ պարագայում «Գոյ»-ը կարող է ընդլայնել իր հնարավորությունները:

2024 թվականի հունվարի 30-ին, ՀՀ կառավարության որոշմամբ, ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրը «Գոյ» թատրոնը վերակազմակերպել է՝ միավորելով այն Գաբրիել Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի հետ:

«Գոյ» թատրոնի ստեղծագործական կազմը դեմ է միավորմանը: Նրանք առաջարկում են իրենց հնարավորություն տալ գործունեություն ծավալել որպես անկախ թատրոն, սակայն «Գոյ»-ի բեմում:

ՄԱՐՔԱԿԱՆ

ԿԱԶՄԵՐԸ ՀԱՅՏՆԻ ԵՆ

Երեւանում կայանալիք սամբոյի աշխարհի գավաթի խաղարկության մասնակից Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվածների ընտրանիների կազմերը հայտնի են:

«Գազպրոմ Արենա»-ում մեկնարկող մրցաշարի Մարզական սամբոյի թիմում են 58 կգ քաշային կարգում Կարեն Սարգսյանը, Տիգրան Կիրակոսյանը, 64 կգ՝ Նարեկ Դալլաքյանը, Արթուր Մանուկյանը, 71 կգ՝ Դավիթ Աբրահամյանը, Կառլեն Մահինյանը, 79 կգ՝ Բորիս Շատվերյանը, Արթուր Ակոպյանը, 88 կգ՝ Վահագն Չալյանը, Գոռ Հարությունյանը, 98 կգ՝ Արսեն Խանջյանը, Արման Եսայանը, +98 կգ՝ Արման Մանուկյանը, Դավիթ Հարությունյանը: Կանանց թիմում հանդես կգան 50 կգ քաշային կարգում Արփինե Ամիրյանն ու Աննա Այվազյանը, 54 կգ՝ Մելինե Մամիկոնյանը, Անի Մարտիրոսյանը, 65 կգ՝ Նանե Հակոբյանը, +80 կգ՝ Նելլի Ավետիսյանն ու Աննա Մկրտչյանը:

Մարտական սամբոյի թիմում հանդես կգան 58 կգ քաշային կարգում Համլետ Սուքիասյանը, Նարեկ Գոգինյանը, 64 կգ՝ Մայիս Ներսեսյանն ու Սուրեն Թամրազյանը, 71 կգ՝ Վաչիկ Վարդանյանը, Վազգեն Մարգարյանը, 79 կգ՝ Ալբերտ Կարհանյանը, Սարգիս Վարդանյանը, 88 կգ՝ Ավետիք Պողոսյանը, 98 կգ՝ Արման Ավանեսյանը, Ժորա Թումանյանը, +98 կգ՝ Էրիկ-Գոռ Համզոյանը, Նորիկ Խուրշուդյանը: Կանանց թիմում հանդես կգան 54 կգ քաշային կարգում Արփինե Մնացականյանն ու Իրինա Պետրոսյանը, 59 կգ՝ Սրբուհի Հովակիմյանը, 80 կգ՝ Ագապի Հարությունյանը:

Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված մեր հայրենակիցներից թիմում կլինեն 58 կգ Դավիթ Հովսեփյանը, 64 կգ՝Յուրի Ահարոնյանը, 88 կգ՝ Դավիթ Գրիգորյանը, 71 կգ՝ Վասակ Բարսեղյանը:

Սամբոյի աշխարհի գավաթի խաղարկությունը, որը այսուհետ կանցկացվի Երեւանում, կկայանա ապրիլի 4-5-ը «Գազպրոմ Արենա»-ում: Մուտքն ազատ է:

ԱՌԱՎԵԼՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՎ

Իտալիայի ֆուտբոլի առաջնության 30-րդ տուրի շրջանակներում «Ինտեր»-ը սեփական հարկի տակ հյուրընկալել էր «Էմպոլի»-ին:

Միլանյան ակումբին հաջողվեց առավելության հասնել «Էմպոլի»-ի նկատմամբ երկու գնդակի առավելությամբ: «Ինտեր»-ի կազմում աչքի ընկան Ֆեդերիկո Դիմարկն եւ Ալեքսիս Սանչեսը:

Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմի նախկին ավագ Հենրիխ Մխիթարյանը «Ինտեր»-ի մեկնարկային կազմում էր, սակայն փոխարինվեց 85-րդ րոպեին:

Այս հաղթանակից հետո էլ «Ինտեր»-ը շարունակում է մնալ Սերիա Ա-ի մրցաշարային աղյուսակի առաջատարը: Թիմն ունի 79 միավոր: Երկրորդ տեղում գտնվող «Միլան»-ը հավաքել է 65 միավոր:

ՄԱՌԼՈՆ ԲՐԱՆԴՈ

ԿԴԱՌՆԱՐ 100 ՏԱՐԵԿԱՆ

Ստանիսլավսկու դերասանական խաղառճի զարգացման եւ տարածման հիմնադրություն, ամերիկացի դերասան, կինոռեժիսոր եւ հասարակական ակտիվիստ Մառլոն Բրանդոն այսօր կդառնա 100 տարեկան:

Աշխարհահռչակ դերասանը ֆիլմաշխարհի ամենահայտնի կերպարներից է, ում հռչակ են բերել հատկապես Թերի Մալոյի կերպարը «Նավահանգստում» ֆիլմից (1954 թվական) եւ Վիտո Կոռլեոնեի կերպարը՝ «Կնքահայրը» ֆիլմից (1972 թվական):

Վերոնշյալ դերերի համար դերասանն արժանացել է «Օսկար» մրցանակի: Բացի այդ, դերասանին մեծ համբավ են բերել նաեւ 1951 թվականին նկարահանված «Ցանկություն. տրամվայը» ֆիլմում Սթենլի Կովալսկիին մարմնավորած իր դերը, ինչպես նաեւ «Վիվա Սապատա», «Հուլիոս Կեսար» եւ «Վայրենին» ֆիլմերում իր մարմնավորած կերպարները: Իր հաջողության գագաթնակետին Մառլոն Բրանդոն խաղացել է «Արտացոլումներ ոսկե աչքում», «Վերջին տանգոն Փարիզում» եւ «Ապոկալիպսիսը հիմա» ֆիլմերում:

Դերասանը, բացի հիանալի դերակատարումներից, հայտնի է նաեւ հասարակական գործունեությամբ, հատկապես՝ սեւամորթների իրավունքների համար պայքարում իր մասնակցությամբ, ինչպես նաեւ հանուն տեղացի հնդկացիների իրավունքների պայքարով, որի համար հրաժարվել է 1973 թվականին իրեն շնորհված «Օսկար» մրցանակաբաշխության արձանիկից:

Մառլոն Բրանդոն ութ անգամ ներկայացվել է «Օսկար» մրցանակի, որից երկուսը շահել է, եւ վեց անգամ ներկայացվել է «Ոսկե գլաբուս»-ի, որը կրկին հաղթել է երկու անգամ:

1999 թվականին Սմերիկյան կինոակադեմիան հրապարակել է բոլոր ժամանակների ամերիկյան ֆիլմերի 100 մեծագույն աստղերի ցանկ, որում հայտնի «Կնքահայրը» ֆիլմի դերանասը զբաղեցրել է 4-րդ հորիզոնականը, ինչպես նաեւ նույն տարվա ընթացքում ընդգրկվել է դարի 100 ամենակարեւոր մարդկանց ցուցակում, որում ներառված էին նաեւ դերասաններ Չարլի Չապլինն ու Մերլին Մոնրոն:

Բրանդոն խաղացել է ավելի քան 40 ֆիլմերում, ինչպես նաեւ անձամբ հեղինակել «Կնքահայրը» ֆիլմում իր մարմնավորած կերպարը՝ Վիտո Կոռլեոնեին:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

●Ապրիլի 16-ին Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում տեղի կունենա «Մեծապատիվ մուրացկաններ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1000-3000 դրամ:

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ, թե ինչպես է որոշվում բնակելի տարածության անհատույց օգտագործման իրավունքի դատական կարգով դադարեցման դեպքում սեփականատիրոջ կողմից վճարվող փոխհատուցման չափը:

Ալիսա Հայրապետյան (37 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ փոխհատուցման չափը մեկ ամսվա համար սահմանվում է իրավունքի դադարեցման պահին տվյալ բնակելի տարածության համար կիրառելի վարձավճարի չափից՝ հաշվարկված հետեւյալ կերպ. յուրաքանչյուր բնակության իրավունք գրանցած անձի համար՝ բնակելի մակերեսի չափը բնակելի տարածության անհատույց օգտագործման իրավունք ունեցող անձանց եւ սեփականատերերի ընդհանուր թվի վրա բաժանելու միջոցով ստացված մակերեսը, սակայն ոչ պակաս 5 քառակուսի մետրից եւ ոչ ավելի, քան 9 քառակուսի մետրը: Փոխհատուցումը հաշվարկվում է երեք տարվա համար եւ տրամադրվում է միանգամից, եթե կողմերի համաձայնությամբ այլ բան նախատեսված չէ (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդված):

Կադաստրի կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Գրավ դրված բնակելի տան կամ բնակարանի վրա բռնագանձում տարածելուց եւ այդ գույքն իրացնելուց հետո գրավատուն ու բնակելի տարածության օգտագործման իրավունք ունեցող անձինք տան (բնակարանի) սեփականատիրոջ պահանջով պարտավոր են ոչ ուշ, քան մեկ ամսվա ընթացքում ազատել զբաղեցրած բնակելի տարածությունը (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 272-րդ հոդված):

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ ովքեր ունեն նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում ներդրված ավանդների փոխհատուցում ստանալու իրավունք: Ո՞ւմ է տրվում առաջնահերթություն:

Սիրան Հակոբյան (42 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում ներդրված ավանդների փոխհատուցում ստանալու իրավունք ունեն մինչեւ 1936 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ծնված, Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու կամ մարտական հերթապահություն կամ հատուկ առաջադրանք կատարելու ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների կամ կամավորականների կամ անհայտ կորածների անունով ներդրված ավանդը ժառանգած, ինչպես նաեւ մարտական գործողությունների հետեւանքով չօգտագործվող եւ հակառակորդի կողմից հողատարածքների գնդակոծման դեպքեր ունեցող, Հայաստանի Հանրապետության սահմանամերձ համայնքներում 2014 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ հաշվառված, ինչպես նաեւ այդ համայնքներից զորակոչված՝ 2014 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ պարտադիր ժամկետային զինվորական ծառայության մեջ գտնված անձինք՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ ավանդների դիմաց փոխհատուցում ստանալու իրավունք ունեցող անձինք հաշվառման նպատակով պետք է դիմեն իրենց փաստացի բնակության վայրի սոցիալական աջակցության տարածքային գործակալություն: Ավանդների դիմաց փոխհատուցում ստանալու համար դիմումը ներկայացնում է ավանդների դիմաց փոխհատուցում ստանալու իրավունք ունեցող անձը անձամբ կամ օրինական ներկայացուցչի կամ լիազորագրի հիման վրա գործող ներկայացուցչի միջոցով:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

«Ես իմ անունից եմ ասում, որպես Սարգիս Արզումանյան, վաղվանից հայտարարում եմ անժամկետ նստացույց»,- «Գոյ» թատրոնի դիմաց բողոքի ակցիայի ժամանակ լրագրողների հետ զրույցում նշեց դերասան Սարգիս Արզումանյանը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	- 3 - 7 + 8 + 13
Կոտայքի լեռներ	- 3 - 6 + 8 + 11
Կոտայքի նախալեռներ	- 2 + 1 +12 + 13
Գեղարքունիք	- 3 - 6 + 6 + 9
Լոռի	- 1 + 3 +11 + 13
Տավուշ	- 1 + 2 +13 + 16
Արագածոտնի լեռներ	0 + 3 + 8 + 10
Արագածոտնի նախալեռներ	+ 3 + 6 +12 + 15

Արարատ	+ 2 + 5 +15 + 17
Արմավիր	+ 1 + 4 +15 + 17
Վայոց ձորի լեռներ	- 3 - 6 + 8 + 11
Վայոց ձորի նախալեռներ	+ 2 + 4 +15 + 17
Սյունիքի հովիտներ	+ 5 + 8 +15 + 19
Սյունիքի նախալեռներ	- 1 + 3 +11 + 15
ԼՂՀ	- 1 + 3 +10 + 14
Երեւան	+ 6 + 8 + 11 + 13

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝**010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **2.4.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*